


**1.2.7. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ  
(սպառողական շուկա)**

**ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)**

	2004թ. հունվար-նոյեմբեր		Ընդհանուրի նկատմամբ, %	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2003թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, %	2003թ. հունվար-նոյեմբեր	2004թ. հունվար-նոյեմբեր
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը	904927.8	109.9	100.0	100.0
<i>այդ թվում</i>				
մանրածախ ապրանքաշրջանառություն	699970.8	109.2	76.9	77.4
բնակչությանը մատուցված ծառայություններ	204957.0	114.1	23.1	22.6

**Սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները**  
(ընդհանուրի նկատմամբ, %)



2004թ. հունվար-նոյեմբերին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի 9.9% աճ՝ 2003թ. հունվար-նոյեմբերի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով: Ընդ որում, դրանում 0.5 տոկոսային կետով աճել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռն ու համամասնորեն նվազել բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը:

**Մանրածախ առևտուր**


2004թ. հունվար-նոյեմբերին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 699970.8 մլն. դրամ, որը 2003թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 9.2%-ով: 2004թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 102.5%:

**Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2004թ. հունվար-նոյեմբերին**

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռը ընդհանուրի նկատմամբ, %
Ընդամենը	699970.8	100.0
<i>այդ թվում</i>		
խանութներ	393895.3	56.3
հանրային սնունդ	7939.7	1.1
սպառողական ապրանքների շուկաներ	227329.2	32.4
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	21458.1	3.1
կրպակներ	49348.5	7.1

**Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2004թ. հունվար-նոյեմբերին**

(ընդհանուրի նկատմամբ, % )



2004թ. հունվար-նոյեմբերին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում և սպառողական ապրանքների շուկաներում իրականացվող առևտուրը՝ 88.7% (621224.5 մլն. դրամ):

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2004թ. հունվար-նոյեմբերին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 227329.2 մլն. դրամ, որը 2003թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, կազմել է 120.9%-ով:


**Սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի, 2004թ. հունվար-նոյեմբերին**

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	210765.7	7.8	92.2
Արագածոտն	166.3	-	100.0
Արարատ	1026.3	1.4	98.6
Արմավիր	2987.6	22.8	77.2
Գեղարքունիք	1484.6	23.7	76.3
Լոռի	4972.4	57.0	43.0
Կոտայք	2449.3	17.3	82.7
Շիրակ	1380.0	6.6	93.4
Սյունիք	472.1	-	100.0
Վայոց ձոր	125.1	-	100.0
Տավուշ	1499.8	29.9	70.1
Ընդամենը	227329.2	9.4	90.6

Հարկ է նշել, որ հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում, 2004թ. հունվար-նոյեմբերին կազմել է 90.6%:

**Սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալն ըստ Երևան քաղաքի և ՀՀ մյուս մարզերի (ամփոփ)**

( ընդհանուրի նկատմամբ, %)



2004թ. հունվար-նոյեմբերին 2003թ. հունվար-նոյեմբերի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի աճ 1.0 տոկոսային կետով:

2004թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 58875.6 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 58 օր:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-նոյեմբերին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 3.1% կամ 21458.1<sup>1</sup> մլն. դրամը:

<sup>1</sup> Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

**Բնակչությանը մատուցված ծառայություններ**


2004թ. հունվար-նոյեմբերին ՀՀ սպառողական շուկայում բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը ընթացիկ գներով կազմել է 204957.0 մլն.դրամ, որը 2003թ. հունվար-նոյեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 14.1%-ով:

Բնակչությանը մատուցված կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 4203.7 մլն. դրամ, որը 2003թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 46.1%-ով:

2004թ.հունվար-նոյեմբերին 2003թ. հունվար-նոյեմբերի համեմատ ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 1.6% հավելված, որը հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի (0.8%), մարդատար տրանսպորտի (1.7%), փոստային և հեռահաղորդակցության (1.3%), մշակույթի (28.8%), զբոսաշրջության և էքսկուրսային (2.4%), առողջարանների և հանգստյան տների (2.8%), բնակարանային-կոմունալ տնտեսության (2.4%) ծառայությունների սակագների հավելվածով: Կրթության, բժշկական և կենցաղային ծառայությունների սակագները նվազել են համապատասխանաբար 0.5, 0.8 և 1.7%-ով:

**Բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքը  
2004թ. հունվար-նոյեմբերին**

(ընդամենի նկատմամբ, %)



2004թ. հունվար-նոյեմբերին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել մարդատար տրանսպորտի (61313.4 մլն.դրամ) և բնակարանային-կոմունալ տնտեսության (50610.4մլն.դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 29.9 և 24.7 %:

2004թ. հունվար-նոյեմբերին խաղատների ծառայությունների ծավալը կազմել է 2577.3 մլն.դրամ կամ բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի 1.3%-ը: Բնակչությանը մատուցված հանակարգչային ծառայությունների ծավալը կազմել է 293.5 մլն. դրամ: